

There are no translations available.


Յուրաքանչյուր հաջող իմացաբանական - ճանաչողական քայլ որպես կանոն, բազմապատկում է խոչընդոտները, քանզի ներառում է իմացության մակրո և միկրո մակարդակները և մշակութային իրողությունների նորանոր շերտեր՝ տարառիթմիկ, տարակերպ ու տարաբևեռ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն ունեն անընդհատ կազմավորվող ու վերակազմավորվող հասարակական - մշակութային հարաբերություններում:

Մշակույթի էության ներքին փոխակերպումները այդ ամենը ժամանակ առ ժամանակ դարձնում են անմշակութային - աններդաշնակ՝ սկզբունքորեն խնդիրը ամրագրելով մետառիթմիկ չափումներով ու ստեղծելով զարկերակային տատանումներ, թեպետ վաղուց անտի ի վիճակի ենք հակադրել կրկնվող շատ երևույթներ, նույնիսկ ազատորեն խոսել նրանց մակարդակի անկման փաստի կամ մշակույթի՝ հետզհետե հեռացող ոտնաձայններից մնացած արձագանքների ու մասսայական մշակույթի՝ օրեցօր ամրագրվող ներկայության հոգետոմատիկ վիճակների մասին: Սա երևույթ է, որ միանգամայն տեսանելիորեն ենթարկվում է փորձառական - էմպիրիկ հաճույքին, և որի մետադարձող ակորդը բազմաթիվ մասնատող (րիզոմային) - հնչյունային տատանումների արդյունքում ենթարկվում է հոգևոր - մշակութային տարբեր մուտացիաների:

Ինքը՝ մտահղացումը՝ հայտնաբերել մշակութային մելոսի ռիթմերը, հանդուգն է (չեն ժխտում), քանզի այն գործնականորեն ներգրավվել է ունիվերսալացման չափումներում ու հասել գլոբալացման. նրա շոշափուկների մասին խոսում են վաղուց և համառորեն, և միայն 1990-ական թվականներից հետո՝ վստահաբար, թե տոտալ քաղաքականության, տոտալ մշակույթի, նույնիսկ տոտալ գրքի ռեժիմի դարաշրջան էր: Մշակութային այսպիսի աններդաշնակություններից էլ ստեղծվում են արմատական-աղետաբեր - համընդգրկուն - հասարակական - հոգևոր - մշակութային պայթյուններ, որոնք հայտնաբերվում են նախ՝ առանձին սուբմշակույթներում (այստեղ՝ գրական) և ապա՝ սուբթնոսներում: Տեսական դիտարկումները մինչ օրս հնարավոր են դարձրել հասարակության կողմից ընկալվող մշակույթի գործառական օրինաչափությունների արձանագրումը՝ միաժամանակ ի ցույց դնելով որևէ սուբմշակույթի միտում-ձգտումը սուբթնոս հասկացությանը:

Սա է պատճառը, որ ոչ մի սուբմշակույթ չի հավակնում երկարակեցության, քանի որ նրա ներսում գործում է պատկեր - տեղեկատվության միջսերնդային հեռարձակումը, որի միջոցով մշակութային այսպիսի խմբերը ձգտում են դառնալ անկախ սուբթնոսներ՝ առավել

խոշոր էթնոսների միջև: Սա աշխարհ է, որ նման է տեսիլքի (և^o կա, և^o չկա), սակայն նրա անընդհատականությունը ստեղծում է ժամանակի մշտատևության գաղափարը՝ խոշոր պայթյունների միջոցով հայտնաբերելով առավել փոքր սուբմշակույթներ, որոնք նույնպես ենթարկվում են պայթյունների:



Ինչպես ցանկացած տոտալ իրավիճակում, այստեղ ևս հենվում են էյդոսի գոյությանը և նույնական ռիթմերն ու գոյացություններն ակտիվորեն ենթարկվում են մուտացիաների՝ դարձնելով այն բոլորից ընդունված քվազիէյդոլոգիական մոդուս՝ դուրս ամեն տեսակ մշակութային - գոյաբանական կարգավիճակից, որը միաժամանակ մասսայական մշակույթի յուրօրինակ մեդիատոր է՝ (լատ. mediator), վերելք - վայրէջք - ցնցում - անկում - պայթյուն - սպառում ուղեգծով: Սա նախանշվում է ինտելեկտի սահմանային գոյությամբ ու մշակույթի՝ որպես ամբողջության, տրոհման ֆունկցիաներով՝ ձևավորելով հոգու և մարմնի ունիվերսալացման մետաֆորը՝ մշակութային aritmia - ի պատկերը, որտեղ մեդիատորի աղմուկը խլացնում է ցանկացած ազդանշան, ու շփումը դառնում է անհնարին:

Այս համատեքստում տեսանելի են մշակութային ներկայացումները՝ հին գաղափարներով ու նոր բեմադրությամբ, որոնց մասնակից դերասանների ուրվականները պտտվում են հասարակական երկնականարում՝ բաժանելով մեզ մեծ աշխարհի հետ հնարավոր բոլոր շփումներից (տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային...), փոխարենը, օգտվելով ամբոխի մտավոր - հուզական - էմպիրիկ ընդունակություններից, ազդում գաղտնի - թաքուն, բայց մարդկանց զգայական բոլոր օրգանները կառավարող ուղեղիկին՝ չթողնելով ազատագրվել ներկայացման մոգականությունից:

Գաղտնագրված այսպիսի ներկայացումները միաժամանակ լավ քողարկված դաժանությունն են արվեստագետի հանդեպ. նրանք իրենց մեջ ամփոփում են դեմոկրատական լուսավոր - ձերմակ երազը, ու այդ երազի եթերային սարսափը, որի նրբագեղ ելունդները հարավամերիկյան լիանաների նման նախ պարուրում են, ապա քնքշանքի ու թուլության ապրումներ ի ցույց դնելով՝ անզգայացնում տվյալ սուբէթնոսը: Երևույթը հիշեցնում է պատմության այն սահմանը, երբ ամերիկյան հասարակությունը դժվարությամբ հաղթահարում էր սառը պատերազմի (մակարտիզմի) հետևանքները՝ բյուրոկրատիայի աննախադեպ աճով, երբ հետապնդվում էր յուրաքանչյուր այլախոհ կամ ճշմարտախոհ: Ու թեպետ պատմությունը դադարում է դիտվել քառսային, այնուամենայնիվ նա իր ներսում կրում է քառսը. մարդը շարունակում է որոնել իմաստ ու կարգ, իսկ ստեղծող - սպառող սահմանների միջև մշտապես թափառում է անգիտակցությունը՝ (ստեղծող ≠ սպառող = անգիտակցություն) փոփոխությունների տիրույթում տարբերակող շերտերից ձգտելով միօրինակության, անհատի կանոնակարգված վիճակից՝ անկարգության (քառսի): Հոգևոր ոչ ժամանակային այսպիսի սահմանից ելակետ է դառնում գրողի մարդատյացությունն ու լռությունը, գրամոլի խրախճանքներն, ու դասագրքերը սերտած քննադատների հեղոնիստական զվարթ մոլորությունները, քանզի յուրաքանչյուր մարդ՝ հասարակական սանդուղքի վերից վար, իր շուրջը ստեղծում է իր աշխարհը՝ յուրօրինակ մրրիկներով ու կեռաձև առոմներով, ինչպես Ղեկարտի մոտ էր: Ու որքան մոտ է մարդը

վերին սանդղակին, այդքան դրանք շատ են՝ շրջված ձվածիրի տեսքով, որ երբեմն-երբեմն ուղղվում են դեպի ելքը՝ պահպանելու հավասարակշռությունը ու տեսանելի դարձնելու ժամանակակից լարախաղացության նոր մոդելը:

Արևմուտքը վաղուց է հայտարարել գրքի՝ որպես մշակութային արժեքի, ընդունային բնույթը և աշխարհի անկարգության (քաոսի) մեջ անհետացող նրա իմաստային կենտրոնը. □ Եթե աշխարհը քաոս է, ուրեմն գիրքը կդառնա ոչ թե կոսմոս, այլ՝ քաոս, ոչ թե ծառ, այլ վերարմատ: Նրա բոլոր ճյուղերը կապված կլինեն միմյանց, սակայն կլինեն անկարգ, խճճված, անակնկալ ընդհատումներով՝ (Ժիլ Դելյոզ, Ֆելիքս Գվատարի): Այս համատեքստում միանման հատկանիշներով (պայմ. միաշաքիլ - Ն. Հ.) գրքի արտադրանքը բացառապես հոգեբանական բնույթ է կրում՝ էություն պարունակներում պահպանելով միայն իրեն հատուկ աշխարհի պատկերը ու մասսայական մշակույթի տիրույթում ստեղծելով սեփական մասնատվող միջուկը, որից էլ անվերջորեն առանձնանում - զատվում են նոր միաշաքիլներ:

Գործնականում գիրքը (այստեղ՝ մասսայական) ևս այսօր տոտալ ռեժիմի հարություն առած ոգին է՝ առավել նուրբ շերտանցումներով ու առավել ազատ՝ իր միջոցների ընտրության հարցում, որ քաղցկեղի պես աճելով հասարակության առօրեականության ու կենսական պահանջների միջև՝ ստեղծում է կրկեսի, կյանքի ու դրանց միջև մշակույթի համատեղելիության գաղափարը՝ բաժանելով ոգին ու մարմինը, բանականությունն ու զգացմունքները, ցնցելով մարդուն ու ստեղծելով թերիության բարդույթը, քանզի սկզբում կրկեսն էր, հետո՝ աշխարհատեսությունը, ու կեսարն այդպես էլ ասում էր՝ կառավարելով երկիրը՝ ամենաիմաստունը մարդկանց սրտերը պետք է դարձնի դատարկ անոթներ, ու որովայնները՝ լիքը...

Միայն ժամանակներն են նորը, իրականում ոչինչ չի փոխվել.. Թեպետ.. ժամանակն էլ չի փոխվել, նույնն է՝ հավերժական վերադարձ - պտույտով... Ինքնուրույնությունը, որին ձգտում է մշակութային արիթմիան, մարդկային գիտակցությունը հասցնում է մի շատ կարևոր մտքի ու խոստովանության անհրաժեշտությանը՝ հաշտվել տատանումների քաոսային ռիթմին ու ապրել այնպես, կարծես ոչինչ չի եղել: Համակերպվել:

Ապակողմնորոշող նշանային որոնումները չեն հասցնում որևէ հանգրվանի, ուստի այս դեպքում կարևորվում է ոչ թե ազգի պատմությունը, այլ գիտակցության պատմությունը, գրողի ու ընթերցողի հոգևոր որոնումները, որոնք տեսանելի են ռացիոնալիստական ճգնաժամի, մշակույթ - կոնտրամշակույթ ընտրության ու դրանց ներսում առկա մարգինալ տարածքների միջև: Յուրաքանչյուր այսպիսի կեղծ գոյություն կազմավորվում է ամենատարբեր զենային ու պատմական մուտացիաների հետևանքով, որոնք տեղի են ունենում մասսայական մշակույթի, մասսայական գրքի հիմքում: Այս կերպ ոչ միայն փշրվում է հիմքը կամ տեղի է ունենում պայթյուն, այլև ի հայտ են գալիս նրանից գոյավորվող միաշաքիլների շոշափուկները՝ սարդոստայն - ցանցը, որն ինքնին ոչնչություն է՝ թույլ - անորսալի - լարծուն, և որում անընդհատ գոյանում է հերթական ճեղքվածքը, բայց ոչ մի արմատական փոփոխություն չի իրականանում, քանզի չի ոչնչանում ցանցի ճարտարա - տեկտոնիկական - կենտրոնական կորագիծը, որն ապահովում է վերջինիս երկարակետությունը՝ ամենուր ու ոչ մի տեղ: Ստեղծվածը andergraund-ային գրականությունն է, որը հավասարման նշան է դնում մասմշակույթի ու մշակութային արժեքի միջև, յուրօրինակ բալիստիկական հրթիռ՝ պատրաստված սեռի, հավատքի, սեքսի, թմրամիջոցների, մարմնավաճառության, սպանությունների, սոցիալական ու քաղաքական աղբի և շատ ու շատ այլ երևույթների խառնուրդով, որը հավաստում է մշակութային տիպերի ու արժեքների պատերազմներն ու ամրագրում դրանց արձագանքներն ու գնահատությունները:



[REDACTED]